**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Աֆ-3**

ք. Երևան <<09>> <<02>> 2015թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և "<<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Գյուլխասյանի ( այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) <<Անտառային պետական մոնիտորինգի իրականացում >> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) ՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Հայաստանի Հանրապետությունում << Անտառային պետական մոնիտորինգի իրականացում >> ծրագրի իրականացման նպատակով (04020202) Շնորհառուին հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 54 573 500 (հիսունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ գումար, իսկ Շնորհառուն պարտավորվում է ծրագիրն իրականացնել վերը նշված որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**2.1 Շնորհատուն իրավունք ունի՝**

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների

անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները:

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2 Շնորհառուն իրավունք ունի՝**

2.2.1 իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3 Շնորհատուն պարտավոր է՝**

2.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2 կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման և կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացված միջոցառման մասին N 2 և N 4 հավելվածներով սահմանված ձևով ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրին և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Շնորհատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Շնորհառուին:

2.3.4. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ

**2.4 Շնորհառուն պարտավոր է՝**

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակում Շնորհատուի կողմից տրամադրվա գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 2 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին,

2.4.4.1. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունը ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվության հետ միաժամանակ, իսկ ծրագրի ավարտից հետո ամփոփ հաշվետվություն՝ հիմք ընդունելով N 2 հավելվածը.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ համաձայն սույն պայմանագրի N - հավելվածի, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորվա անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել՝ 54 573 500 (հիսունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 4 600 000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին, որպես կանխավճար:

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը Շնորհառուն Շնորհատուին է ներկայացնում մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ համաձայն՝ N 4 հավելվածի Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո, Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին:

4.3. Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N2 և N4 հավելվածներով սահմանված ձևի հաշվետվություններն ընդունվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, համաձայն N 3 հավելվածի:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և փոխանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես գրավոր պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակով, 11 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՏՆՕՐԻՆՈՂ... 

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
h/h 900011008308

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ____________
Կ. Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Երևան մ/ճ

h/h 1150002560950100
ՀՎՀՀ 01555644

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ____________
Կ. Տ

Հավելված 1
2015թ ___02___ . ___09___-ին
կնքված N445-3 պայմանագրի

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

| NN | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնա ժամկետը | պահանջվող գումարը (հազ.դրամ) |
| 1. | **Անտառների պետական մոնիտորինգի իրականացում** | Ծրագրի իրականացման նպատակն է կանխարգելել ՀՀ անտառներում ապօրինի հատումները և մարդածին այլ բացասական գործողությունները, աջակցել անտառների և անտառային հողերի արդյունավետ օգտագործմանը և կայուն կառավարմանը, անտառի ազգային ծրագրի իրականացմանը: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հատկացվող դրամաշնորհի տրամադրումը պայմանավորված է անտառների և անտառային հողերի վիճակի և դրա բացասական ներգործության ու հետևանքների մոնիտորինգի կազմակերպում, դիտարկումներ, գնահատումներ, կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացում, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման և իրացման, սպառման շղթայի, հանրապետությունից արտահանվող և հանրապետություն ներմուծվող փայտանյութի տվյալների հավաքագրում, վերլուծություն, կենտրոնացված հաշվառում, մշակում և իրավասու պետական մարմիններին տրամադրման նպատակով պետության կողմից | Ծրագրավորվում է իրականացնել ՀՀ կառավարության կողմից սահմանված անտառների պետական մոնիտորինգի իրականացման կարգի ու ապօրինի հատումների և անտառանյութի անտառից դուրս բերման մոնիթորինգի չափորոշիչների հիման վրա իրականացնել անտառների պետական մոնիթորինգ ՀՀ բոլոր անտառներում և անտառային հողերում անկախ նրանց նպատակային նշանակությունից: Վերցնել ՀՀ պետական մարմիններից, կազմակերպություններից և այլ աղբյուրներից անտառօգտագործման, անտառտնտեսվարման, անտառների պահպանության, բնափայտի տեղափոխման, իրացման վերաբերյալ ստացված տեղեկատվությունները: | Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ստեղծել տեղեկատվության փոխանակման գործող ցանց տեղական մարզային և պետական կառավարման մարմինների հարթություններում, ապահովել անտառների պահպանության, ապօրինի հատումների և այլ բացասական գործողությունների դեմ տարվող աշխատանքների, ոլորտում տիրող վիճակի թափանցիկությունը, ապահովել բնապահպանական և այլ հասարակական կազմակերպությունների, հասարակության ներգրավումը բնապահպանական ոլորտում որոշումների ընդունման, հասարակության բնապահպանական կրթվածության և իրազեկության բարձրացումը, գնահատել հանրապետությունում | 30.12.2015թ | 54 573.5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | <<Անտառների պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական համապատասխան աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ: | | փայտանյութի սպառման շուկան: | | |
| | Ընդամենը | | | | | 54 573.5 |

**ՇՆՈՐՀԱՏՈՒ**

*<< գյուղատնտեսության նախարարություն*

*ք. Երևան, Կառավարական շենք 3*

*<< ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն*

*հ/հ 900011008852*

*Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*____________

*Կ. Տ*

**ՇՆՈՐՀԱՌՈՒ**

*<<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ*

*ք. Երևան, Մամիկոնյանց 39ա*

*<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ Երևան մ/ճ*

*հ/հ 1150002560950100*

*հվհհ 01555644*

*Ա. ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ*____________

*Կ. Տ*

2015 թվականի 02 09-ին
կնքված N 2կ/ֆ-3 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը — ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Ծրագրի անվանումը — <<Անտառային պետական մոնիտորինգի իրականացում>>

| Նկարագրությունը | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Նախատեսվում է իրականացնել 2015 թվականի ընթացքում, ընդ որում աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | I կիսամյակ | ինն ամիս | տարի |
| | | | քանակը | քանակը | քանակը | քանակը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Հասարակական կազմակերպությունների hետ համատեղ անտառային տարածքներում ուսումնասիրությունների և դիտարկումների անցկացում | Անտառներում դիտարկումներ և ուսումնասիրություններ | հազար հա | 30 | 150 | 280 | 370 |

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008852

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ____________
Կ. Տ

ՇՆՈՐՀԱՌՈՒ

<<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Երևան մ/ճ

հ/հ 1150002560950100
հվհհ 01555644

Ա. ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ ____________

Հավելված 3
2015 թվականի 02 05-ի
կնքված N4-3 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Նախ |
|---|---|---|---|---|
| 04 | 02 | 02 | 02 | 104007 |

Ծրագրի անվանումը

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

4.գանձապետական բյուջետային հաշվի համարը 900011008852

<<Անտառային պետական մոնիտորինգի իրականացում>>

հազ. դրամ

| հ/հ | Ձեռք բերվող ծառայությունների անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Ընդամենը տարեկան | Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից, ընդ որում աճողական | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | I կիսամյակ | | | ինն ամիս | | | տարի | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Անտառների պետական մոնիտորինգի իրականացում | 4637 | 54573.5 | 4600.0 | 9100.0 | 13740.0 | 18240.0 | 22740.0 | 27380.0 | 31880.0 | 36380.0 | 42380.0 | 48380.0 | 54573.5 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008852

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ԿՏ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ Երևան մ/ճ
հ/հ 150002560950100
ՀՎՀՀ 01555644

Ա. ՊՅՈՒՐՆԻՆՅԱՆ
ԿՏ

Հավելված 4
2015 թվականի ___Օ2___ ___Օ7___ -ին
կնքված N պայմանագրի
ԱՓ 3

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01________ - 01.________ ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը ________

2. Փոստային հասցեն ______

3. Հիմնարկի սպասարկման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը____________
5. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը________

6. Հիմնարկի գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը

7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝
(22 պետական բյուջե 1, համայնքի բյուջե՝ 2)

8. Բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգմամբ
Բաժին N
Խումբ N
Դաս N

9. Ծրագրի անվանումը

10. Ծրագրի կոդը

11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման

12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը | NN | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխությունները տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չվճարված (ժամկետանց պարտքեր) | | Դեբիտորային պարտքեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 22 օրենքի (համայնքի ավագանու որոշում) | 22 կառավարության կողմից (համայնքի ղեկավարի որոշմամբ) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որից 30 օրից ավել պարտքեր | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | Ընթացիկ ծախսեր | X | | | | | | | | | | | |
| | այդ թվում | | | | | | | | | | | | |
| ---- | ------ | | | | | | | | | | | | |
| 1150000 | 5. Դրամաշնորհներ | X | | | | | | | | | | | |
| 1167100 | Ընթացիկ դրամաշնորհներ | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պետական և համայնքային պետական ոչ առևտրային կազմակերպություններին | | | | | | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | x | | | | | | | | | | | |

| Նկարագրություն | Միջոցառման անվանում | Չափի միավոր | Պայմանագրով նախատեսված և ___ եռամսյակ | | Շեղման պատճառները |
|---|---|---|---|---|---|
| | | | պլանային | փաստացի | |
| | | | | | |
| | | | | | |

__ ____________ 200_ թ.

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ ______________ (ստորագրություն) ______________ (Ա.Հ.Ա.)

Կ. Տ.

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ______________ (ստորագրություն) ______________ (Ա.Հ.Ա.)

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆ 12
## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
08.01.2014-30.12.2014 ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
2. Փոստային հասցեն՝ Մամիկոնյանց 39-Ա, 0051
3. Հիմնարկի ենթակայության մարզի և համայնքի կոդը
ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման
մարմնի անվանումը ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
5. Հիմնարկը սպասարկող բանկի անվանումը՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
6. Հիմնարկի հաշվարկային հաշիվ՝ 1150002560950100
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝
(ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման Բաժին N 04, Խումբ N 02, Դաս N 02

9. Ծրագրի անվանումը Անտառային պետական մոնիտորինգի
10. Ծրագրի կոդը իրականացում 02
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 104007

12. Չափի միավորը՝ *հազար դրամ*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեսկզբի հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա սակայն չվճարված վճարումներ | | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որից 30 օրից ավել ժամկետով | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում | | 54573.5 | | | | 54573.5 | 54573.5 | 53889.3 | 54573.5 | | | |
| 1150000 | 5.Դրամաշնորհներ | | 54573.5 | | | | 54573.5 | 54573.5 | 53889.3 | 54573.5 | | | |
| 1167100 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների պետական ոչ առևտրային կազմակերպություններին | 4637000 | 54573.5 | | | | 54573.5 | 54573.5 | 53889.3 | 54573.5 | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | | 54573.5 | | | | 54573.5 | 54573.5 | 53889.3 | 54573.5 | | | |

| Նկարագրությունը | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Պայմանագրով նախատեսված և փաստացի տարի | | Շեղման պատճառները |
| --- | --- | --- | --- | --- | --- |
| | | | պլանային | փաստացի | |
| Մասնակի վնասվածքների և ուսումնասիրությունների իրականացում անտառային հողերում | 2014թ. հատատեղային ֆոնդի և այլ հատատեղերի կազմակերպման և շահագործման, անտառների պահպանության վիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ | հա | 370.0 | 370.0 | |

«23» հունվարի 2015թ.

Կ.Տ.

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ